

---

---

ՄԻՄՈՆ ԿՐԿՅԱՇԱՐՅԱՆ  
(Ծննդյան 85-ամյակին)

*Դեռևս V դարում հայ մատենագրությունը հսկայական գրադարան ստեղծեց այն իմաստուն մտահոգությամբ, որ ամեն ազգային գրականություն առավել*



*հարստանում ու զարգանում է այլ ժողովուրդների մտավոր գանձերը յուրացնելու ճանապարհով: Եվ մեսրոպատառ հայ մատենագրության ու գրականության յուրաքանչյուր վերելք և ծաղկում զուգակցվել է մեծ թարգմանիչների ջանքերի շնորհիվ հայերենի թարգմանված գործերի առատությամբ ու որակական կատարելությամբ: Սա եղել է օրինաչափություն, և ազգանվեր, հայրենանվեր է համարվել այն մտավորականը, ով ջանադիր համալրել է մեր մատենագրության թարգմանական գանձարանը՝ դրանով լայնացնելով կրթված հայի աշխարհայացքը, հարստացնելով նրա գիտելիքները, բարեփոխելով մեր արքայական լեզվի բնականոն ընթացքը: Ահա*

*այդ մտահոգությամբ են նաև Մխիթար Սեբաստացուց, Խ. Աբովյանից սկսած մեր նոր գրականության մեծերը նվիրվել թարգմանական սուրբ գործին ու հանապազ դժգոհ մնացել վերջինիս դրսևորումների որակից և քանակից:*

*XX դ. վերջին չորս տասնամյակների ու XXI դ. մեր օրերի նախանձախնդիր գիտնական հայ թարգմանիչների խիստ երևելի առաջատարներից է Միմոն Կրկյաշարյանը:*

*ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտը և հայ գրողների ընտանիքը ունեն թարգմանական գրականության մի մեծ երախտավոր, որը երկար տարիներ հարստացրել է հայ գրականության գանձարանն իր հոյակապ թարգմանություններով: Դրանք հիմնականում հին հունական գրականության համաշխարհային արժեք ունեցող պատմական հուշարձաններն են, որոնց նշանակությունը դարերի ընթացքում ոչ միայն չի նվազում, այլև, ընդհակառակը, շարունակում է ներշնչման աղբյուր լինել հայ գրողների ու արվեստագետների համար:*

*Այդ մեծավաստակ երախտավորը Միմոն Կրկյաշարյանն է, որը բոլորեց իր 85-ամյակը: Ծնվել է Աթենքի Կոկինիա արվարձանում, ուր ծնողներն ապաստանել էին Կիլիկյան Հայաստանի Հաճն քաղաքից: Սկզբնական կրթությունը ստացել է տեղի յոթնամյա հայկական դպրոցում, որն ավարտել է 1936 թ.: Ապա ընդունվել է տեղի հունական գիմնազիան և այն ավարտել 1943 թ.: Նրա կյանքի լուսավոր էջերից է Հունաստանի Դիմադրության շարժման գործուն մասնակ-*

ցությունը: Երիտասարդ Ս. Կրկյաշարյանը, վտանգելով իր կյանքը, պայքարել է ֆաշիզմի դեմ՝ հանուն մարդկության համընդհանուր խաղաղության ու բարօրության: 1944–47-ին սովորել է Աթենքի Կապոդիստրիասի անվան ազգային համալսարանում: 1947-ին կիսատ թողնելով ուսումը՝ Ս. Կրկյաշարյանը ներգաղթել է Հայաստան: Սկզբնական շրջանում պատմություն է դասավանդել Երևանի դպրոցներից մեկում: 1950 թ. ընդունվում է Խ. Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտի պատմության ֆակուլտետը, որը գերազանցությամբ ավարտել է 1954 թ.: 1959 թ. նա ընդունվում է Գիտությունների ակադեմիայի պատմության ինստիտուտի ասպիրանտուրա և գործուղվում Լենինգրադի համալսարանի պատմության ֆակուլտետի Հունաստանի և Հռոմի պատմության ամբիոն: Այստեղ նա աշակերտում է նշանավոր գիտնականներ Հ. Օրբելուն, Բ. Պիոտրովսկուն, Վ. Ստրուվեին, Բ. Դյակոնովին, Զ. Կոլբովային: 1962 թ. ավարտելով ասպիրանտուրան՝ Ս. Կրկյաշարյանը վերադառնում է Երևան, ուր որպես կրտսեր գիտաշխատող աշխատանքի է անցնում պատմության ինստիտուտում: 1963 թ. Ս. Կրկյաշարյանը պաշտպանում է «Հելլենիստական թագավորների փոխհարաբերությունները Փոքր Ասիայի և Հայաստանի քաղաքների հետ» վերնագրով ատենախոսությունը և արժանանում պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի: 1980 թ. պաշտպանում է դոկտորական ատենախոսությունը՝ «Հին Հայաստանի պետական կառուցվածքը» թեմայով: 2000 թվականին իր գիտական ծանրակշիռ վաստակի համար ընտրվել է ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ:

Ս. Կրկյաշարյանի գիտական հետաքրքրությունների շրջանը բազմազան է. այն ընդգրկում է հելլենիստական քաղաքների, հին Հայաստանի պետական կառուցվածքի, հասարակական-քաղաքական պատմության, հայ-հունական, հայ-հռոմեական, հայ-պարսկական հարաբերությունների բնագավառները՝ ժամանակագրորեն ընդգրկելով մի ամբողջ հազարամյակ՝ մ. թ. ա. VI դարից մինչև V դարում Մեծ Հայքի Արշակունյաց թագավորության անկումը:

Ս. Կրկյաշարյանը թարգմանությունները կատարել է հատուկ ընտրությամբ: Հին աշխարհի գրական եզակի հուշարձաններից է Հոմերոսի «Ռդիսականը», որը հայ ընթերցողն ունեցավ 1957-ին: Հին հունարենի, գրաբարի, այլ լեզուների քաջիմացությունը, բազմագիտակությունը հնարավոր դարձրին իրականացնելու հին աշխարհի մատենագրական գանձերին համարժեք հայերեն ընտիր թարգմանությունները: Ս. Կրկյաշարյանը թարգմանել է Հունաստանի պատմահոր՝ Հերոդոտոսի երկը: Ընդհանրապես մ. թ. ա. V դարը Հունաստանի մատենագրության ամենափայլուն ժամանակահատվածներից էր: Այդ շրջանի երևելի երկերից են Եվրիպիդեսի «Իֆիգենիան Ավլիսում» և Սոֆոկլեսի «Անտիգոնե» ողբերգությունները: Վերջինս իրենով նշանավորում է աթենյան մտավոր կյանքի ամենաշքեղ շրջանը, նրանում ի մի էին բերված Հին Հունաստանի քաղաքական, բարոյական, կրոնական լավագույն պատկերացումները: Այդ թարգմանությունները ևս գիտնականին են: «Իֆիգենիան Ավլիսում» ողբերգությունը 1975-ից սկսած մեծ հաջողությամբ բեմադրվել է Երևանի Գ. Սունդուկյանի անվան թատրոնում՝ փառքի արժանացնելով նաև թարգմանչին: Ս. Կրկյաշարյանի շնորհիվ հայ ընթերցողի սեփականությունը դարձան Քսենո-

փոնի «Անաբասիսը» (1970), «Կյուրոպեդիան» (2000), «Սոկրատյան երկերը» (2001), Պլուտարքոսի «Կենսագրությունները» (2001): Այս երկերը ոչ միայն վարպետորեն թարգմանված են, այլև դասական բանասիրության ու պատմագիտության պահանջների համեմատ ծանոթագրված: Գիտնականի գրչին են պատկանում Հովսեփոս Փլավիոսի և Դիոն Կասսիոսի, ինչպես նաև Դիոդորոս Սիկիլիացու երկերի՝ Հայաստանին վերաբերող հատվածների թարգմանությունը: Վերջինիս գրչին պատկանող 40 գրքերը հայտնի են «Պատմական գրադարան» ընդհանուր խորագրով: Այդ պատմական մատյաններն ընդգրկել են մի ժամանակահատված, որն սկսվում էր վաղնջական ժամանակներից և հասնում մինչև Հուլիոս Կեսարի կողմից գալլերի դեմ մղված պայքարի դրվագները:

Ուղղակի հիացմունք են պատճառում Երևանի պետական համալսարանի հրատարակած «Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա» ժողովածուի I հատորի մեջ զետեղված այն նյութերի քանակը, որոնց թարգմանիչն է Ս. Կրկյաշարյանը: Դրանք վերաբերում են Հայաստանի պատմության հնագույն շրջանին և լրացնում են ուսանողների համար հայ ժողովրդի պատմության վերաբերյալ ցանկալի գիտելիքների բացը: Անհրաժեշտ է թվարկել դրանք անվանի պատմաբանի և վարպետ թարգմանիչ կատարած աշխատանքի կատարելությունն ընկալելու համար: Նյութերը քաղված են անտիկ շրջանի այն մատենագիրների երկերից, որոնցում արժեքավոր տվյալներ կան Հայաստանի հեռավոր անցյալի վերաբերյալ: Այդ մատենագիրներն են՝ Հերոդոտոս, Քսենոփոն, Դիոդորոս Սիկիլիացի, Պոլիբոս, Հովսեփոս Փլավիոս, Ապիանոս, Դիոն Կասիոս, Պլինիոս Ավագ: Ընդհանրապես մեծ է Սիրմոն Կրկյաշարյանի ավանդը «Հին հունական աղբյուրներ» մատենաշարի նյութերը հարստացնելու գործում: 1985-ին այդ մատենաշարով լույս տեսած Դիոդորոս Սիկիլիացու երկերում եղած Հայաստանին վերաբերող հատվածներին թարգմանիչը կցել է մեծարժեք առաջաբան, որում համառոտ, սակայն փաստահարուստ ներկայացված է Դիոդորոսի երկերի ընդհանուր բնութագիրը: Նա բացատրում է, թե ինչու որոշակի շրջանում լատին պատմիչները դեռ հունարենով էին շարադրում իրենց մատյանները. «Քանի որ այդ շրջանում հռոմեական գրականությունն ու պատմագրությունը դեռևս հազիվ իրենց առաջին քայլերն էին անում, ապա բնական է, որ ժամանակաշրջանը արտացոլող երկերը պետք է գրվեին ոչ թե Հռոմի պաշտոնական լեզվով, այն է՝ լատիներեն, այլ դարձյալ հունարեն, որը ժամանակի *lingua franca*-ն էր»<sup>1</sup>: Թարգմանիչը ներկայացնում է, թե ինչպես 30 տարի շարունակ Դիոդորոսը շրջել է երկրից երկիր, դիմացել դժվարություններին ու փտանգներին, եղել Եվրոպայի և Ասիայի մեծ մասում ու իր գրքերի համար նյութեր հավաքել: Նա տարանջատում է Դիոդորոս Սիկիլիացու գրադարանի տարբեր հատորների սկզբնաղբյուրները: Դիոդորոսը գրել է համաշխարհային պատմություն: Եզրիպտոսի պատմության համար, օրինակ, օգտվել է Հեկատեոսից (VI – V դդ. մ. թ. ա.), Ասորեստանի և Պարսկաստանի պատմության համար Հերոդոտոսից: Պատմաբան-թարգմանիչը գնահատում է Դիոդորոսի

<sup>1</sup> Դիոդորոս Սիկիլիացի. Թարգմանություն բնագրից, առաջաբան և ծանոթություններ Ս. Ս. Կրկյաշարյանի, Երևան, 1985, էջ 5-6:

գրադարանի հատորների ճանաչողական արժեքը, մատնացույց անում թերությունները, բնութագրում լեզվաառճական առանձնահատկությունները. «Դիողորոսի լեզուն և ոճը հատկապես բարձր է գնահատել բյուզանդական հայագի մատենագիր, Կոստանդնուպոլսի պատրիարք Փոտը (IX դ.), որը նույնիսկ իր հեղինակած մատյանը, հետևելով Դիողորոսին, անվանել է «Գրադարան»<sup>2</sup>: Ս. Կրկյաշարյանը մատնացույց է անում Դիողորոսի երկի կարևորությունը խորենացիագիտության համար: Այդ մասին խոստովանում է հենց մեր պատմահայրը. «Ոչ հնախօսութիւնք եղեալ մերոյ աշխարհիս, և ոչ ընդ ամենայն յունականսն անցանել ատակեալ սակս կարճութեան ժամանակին. նա և ոչ մատենագրութիւնք Դիողորի հուպ առ մեզ են, զի ի նմա պահելով զակն՝ անմոռաց անցանեաք ընդ բնան, զի մի՛ ինչ ի մենջ մնացէ ի գլխաւորացն և ի պիտանեացն, և արժանի յիշատակի մերոց շարագրութեանց»<sup>3</sup>:

Ս. Կրկյաշարյանը շատ ուշագրավ նկատումներ ունի Շամիրամի պատմության վերաբերյալ: Նրա կարծիքով Շամիրամի մասին Խորենացու պատմածներն իրենց հիմքում ունեն Դիողորոսի երկի ընդարձակ պատումը: Ըստ պատմաբանի՝ արդեն V դարում Դիողորոսի գրադարանի շատ գրքեր կորած էին, և Խորենացին նրա երկից օգտվել է հատվածաբար: Նրա կարծիքով Դիողորոսի երկն ազդել է Խորենացու աշխարհայացքի վրա՝ հեթանոսական ժամանակներում նշանավոր պատմական անձերին աստվածացնելու ավանդույթի ընկալումներում: Հետաքրքիր է, որ Դիողորոսի երկում կան Քսենոփոնի «Անաբասիսում» եղած դեպքերի նկարագրություններ, որոնք ըստ պատմաբանի քաղված են ոչ թե «Անաբասիսից», այլ նույն արշավանքին մասնակցած ուրիշ ականատեսի գործից: Խիստ արժեքավոր են Ս. Կրկյաշարյանի գիտական ծանոթագրությունները: Շամիրամի «Կախյալ պարտեզների» մասին նա գրում է. «Այս «կախյալ պարտեզները» իրականում կառուցել է բարելոնյան թագավոր Ներուկագրեզարը (605-562 թթ.) իր կնոջ՝ մարական իշխանուհի Ամյուհայի համար: Այս մասին հաղորդում է նաև հրեա մատենագիր Հովսեպոս Փլավիոսը»<sup>4</sup>: Ծանոթագրություններում արժեքավոր փաստեր կան Բեհիստունի վաղնջական սեպագիր արձանագրության վերաբերյալ, «որը ոչ միայն ունի խոշոր պատմական նշանակություն, այլև դարձել է բանալի սեպագիր արձանագրությունների վերծանման համար»<sup>5</sup>: Հովսեպոս Փլավիոսի երկի թարգմանության առաջաբանում Ս. Կրկյաշարյանն ունի այսպիսի նկատում. «Ճաշակով ընտրված բառամթերքը, դասական համաչափ ու շքեղ ոճը մեծապես պարտավորեցնում է թարգմանչին և դժվարին խնդիրներ հարուցում նրա առաջ»<sup>6</sup>:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 9:

<sup>3</sup> Մ ո վ ս ե ս Խ ո ռ ե ն ա ց ի. Պատմութիւն Հայոց, քննական բնագիրը և ներածութիւնը Ս. Արեղեանի և Ս. Յարությունեանի, Երևան, 1991, էջ 257:

<sup>4</sup> Դ ի ո դ ո ռ ո ս Մ ի կ ի լ ի ա ց ի, էջ 167:

<sup>5</sup> Նույն տեղում, էջ 168:

<sup>6</sup> Հ ո վ ս ե պ ո ս Փ լ ա վ ի ո ս. Թարգմանություն բնագրից, առաջաբան և ծանոթագրություններ Ս. Ս. Կրկյաշարյանի, Երևան, 1976, էջ 16:

Պատմաբանն անաչառ է համարում հրեա պատմիչի վերաբերմունքը Հայաստանի թագավորներ Տիգրան Մեծի և Արտավազդի վերաբերյալ: Պլուտարքոսը Արտավազդին ներկայացնում է «իբրև նենգամիտ և հռոմեական շահերին դավաճանած մարդ, մինչդեռ Հովսեպոսի մոտ նա ներկայացված է իբրև զոհ Անտոնինոսի մեքենայությունների և փառասիրության»<sup>7</sup>: Ս. Կրկյաշարյանը մատնացույց է անում հայոց պատմահոր գլուխգործոցի՝ «Հայոց պատմության» և Հովսեպոսի երկերի աղերսները: Նա անդրադառնում է անվանի խորենացիագետ Գ. Սարգսյանի՝ Ս. Խորենացու օգտագործած աղբյուրների եղանակների բացատրություններին՝ համաձայնելով դրանց հետ: Այդ մեծարժեք առաջաբանից իմանում ենք, որ Հովսեպոս Փլավիոսի «Հրեական պատերազմի մասին» մատյանը 1660-ին Ստեփանոս Լեհացին լատիներենից թարգմանել է հայերեն: Այն տպագրվել է 1787-ին: 1760–1761 թթ. Տայի Սիմոնյան Աթանաս վարդապետը ևս իտալերեն թարգմանությունից հայերենի է վերածում Հովսեպոս Փլավիոսի «Հրեական հնախոսությունը», որը մնում է անտիպ: Պատմաբանը Ստեփանոս Լեհացու թարգմանությունն առավել հաջողված է համարում և այդ երկու գրաբար թարգմանություններում եղած անճշտություններն ու աղավաղումները կապում XVII – XVIII դդ. պատմաբանասիրական մակարդակի հետ:

Բացի անտիկ գրական հուշարձանների թարգմանություններից, Ս. Կրկյաշարյանը հայերենի է վերածել ժամանակակից մի շարք հույն գրողների երկեր (Կ. Վառնալիս, Է. Պանսելինու): Հատկապես ուշագրավ է Մ. Ալեքսանդրապուլոսի «Հայերը» երկի թարգմանությունը (1984): Անվանի գիտնականը հայ ուսանողությանն ու դասախոսներին, ընդհանրապես մտավորականությանը մատուցել է ևս մի կարևոր նվեր՝ «Դիցաբանական բառարանի» թարգմանությունը:

Այս և նման այլ գիտական, աղբյուրագիտական, գեղարվեստական երկասիրությունների լույս աշխարհ բերելուն զուգընթաց՝ Ս. Կրկյաշարյանը նաև բանաստեղծ է, ու նրա հունարեն գրած «Ցայգալույս» բանաստեղծությունների անդրանիկ ժողովածուն լույս է տեսել դեռևս Աթենքում 1946-ին: 1977 թ. նա ընտրվել է Հայաստանի գրողների միության անդամ: Ականավոր գիտնականի վաստակն ըստ արժանվույն գնահատվել է նաև արտասահմանում. 1986 թ. նա Հռոմի գրականության և արվեստի «Տիրերինա» ակադեմիայի արտասահմանյան անդամ է: Տարիների ընթացքում Ս. Կրկյաշարյանն արժանացել է Հայաստանի գրողների միության Ե. Չարենցի անվան, «Կանթեղ» և Մայր արթո՝ Ս. Էջմիածնի մրցանակներին:

Մեր խոսքը գիտական խիզախումների և թարգմանական նվաճումների մի փաստահարուստ ցանկ է, որը նրա հեղինակին պարտավորեցնում է շարունակել իր ազգոգուտ, հայրենանվեր և լուսավոր գործունեությունը դեռ երկար տարիներ՝ իր մարդասեր, բարի և առինքնող կերպարով ջերմացնելով գիտությանը նվիրված անհատներին, օրինակ ծառայելով նրանց:

ԱԵԼԻՏԱ ԴՈԼՈՒԽԱՆՅԱՆ

<sup>7</sup> Նույն տեղում, էջ 23: